

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Նահապետեան Հ. Գ. — Քրիստոնեական
ճարտարապետություն (պատմական հետազո-
տություններ) 97

Zanolli Prof. Almo. — Un très an-
cien commentaire grec sur le Lévitique,
conservé en arménien 106

Փեշիկյան Հ. Եղիա. — Հ. Յակոբոս վ.
Տաշեան 131

ԳՐԱԿԱՆ

Յովհաննեսեան Հ. Վ. — Չար աչքեր . 123

Քաջարեկց Հրաչ. — Հեծուծին . . . 123

Սրապեան Արամայիս. — Չոն և քեր-
թուած 124

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ք. Հ. Կ. — Chrestomatie de l'Armé-
nien moderne (par F. Macler) . . . 131

ԳԻՏԱԿԱՆ

Դաշիբեան Յակոբ. — Նիւթին կազմու-
թիւնը 126

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Յովհաննեսեան Հ. Վահան. — Առնու-
վիլի նորաշէն կաթողիկէն . . . 112

Խմբ. — Նկարիչ Զարեհ Մուրադեան և
եր նկարահանողներ ի Միւսն . . . 118

ԱՅԼԵԻԱՅԼԻՔ

Խմբ. — Մուրադեան պատկերաւոր գոյգ մը
մասնագէտ եւս 122

Փ. Հ. Ե. — Հայկական Մամուլ —
Հանդէս Հանդիսից 136

Խմբ. — Թատերական ներկայացումներ
Միւթարեան վարժարաններուն մէջ. ի փա-
րիզ և ի Վիեննայի 138

Բեղլեկիւնոյ. — Փողաքական տեսութիւն
Ազգասեր. — Ազգային քրոնիկ . . . 140

Ազգասեր. — Ազգային քրոնիկ . . . 144

ACADEMIE ARMENIENNE

Nahabédian P. G. — L'Architecture
des églises (recherche historique) . . . 97

Zanolli Prof. Almo. — Un très ancien
commentaire grec sur le Lévitique, con-
servé en arménien 106

Paitchikian P. Elie. — P. J. Dashian 131

LITTERATURE

Hovhannessian P. V. — Oeils mau-
vais (poésie) 123

Katcharentz Hratch. — Gémissement
(poésie) 123

Srabian A. — Hommage et poésie . 124

RECENSION

K. P. C. — Chrestomatie de l'Armé-
nien moderne (par F. Macler) . . . 131

SCIENCE

Davidian Agob. — La constitution
de la matière 126

BEAUX ARTS

Hovhannessian P. V. — Une nouvelle
église des Arméniens à Arnouville-les-
Gonesses 112

Réd. — Zareh Moutafian (peintre) . 118

DIVERS

Réd. — Diplômés (spécialistes) de la
Bourse Moorat 122

P. P. E. — Presse Arménienne —
Revue des Revues 136

Réd. — Représentations théâtrales
dans les Collèges Moorat-Raphaël: à
Sèvres et à Venise 138

Pellegrino. — Vie internationale . 140

Azhasser. — Chronique arménienne. 144

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

1843-1933

ՀԱՏ. ՂԱ. ՌՅԶԲ-ՌՅԶԳ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ


ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԱԽՈՐՈՒՄԸ

(Շար. տես «Բազմավէպ» 1933, էջ 12)

ԽԲ. Դ. դարու մէջ շինուած Հայաստանի
բազիլիկայ եկեղեցիներու մակարդակաչա-
փը տեսանք որ համապատասխան է փոքր
Ասիոյ եկեղեցիներուն, որոնց շատերուն
շինութիւնը կարելի ըլլայ թերեւս հանել
Գ. դարու վերջին կիսուն, երբ Դեկոսի
հալածանքէն յետոյ եկեղեցին սկսաւ խա-
ղաղութիւն վայելել և շինուիլ: Հնութեամբ
առաջին կը հանդիսանայ Կիլիկիոյ-Տաւրոս
եկեղեցին, որուն նմանը գոյութիւն ունի
Կապադովկիոյ Պին-պիր-քիլիսէ գաւառին
մէջ: Երբ Կապադովկիա կը յիշենք, Հա-
յաստանի համար օտար երկիր մը չէ.
Գ. դարու Պարսից և Ֆունաց կոիւնքու
ժամանակ, իշխանազուն և նախարարա-
զուն շատ հայեր պարսիկներէն նեղուելով՝
ապաստան կը գտնէին յունական կայ-
սրութեան սահմաններուն մէջ:

Նախընթաց յօդուածնուս մէջ շեշտեցինք
որ հայերը բազիլիկայ ոճէն կը զգուշա-
նային, և աւելի հակամէտ եղած են գրմ-
բէթաւոր շինուածքին՝ իբրեւ իրենց աւելի
ընտանի և ճաշակին յարմար: Անոնք իրենց
տուններ կամ արքունական տաճարներ
կանգնելու համար մշակեցին և աճեցուցին
այդ արուեստը, զոր յետոյ կիրարկեցին
նաեւ եկեղեցիներ շինելու ժամանակ: Մենք
համոզուած ենք որ Արշակունի թագաւո-
րաց ժամանակէն արքունի ապարանքներու
մէջ գմբէթաւոր ընդարձակ շինութիւններ
կային, իբրեւ հասարակաց հաւաքատեղի:
Ահաւասիկ կը ներկայացնենք շատ գեղե-
ցիկ և համոզիչ օրինակ մը մեր թագա-
ւորներու և իշխաններու Դարպասին (Դուռն
կամ արքունիք) այսինքն այգորելի դահ-
լիճներուն և ուրախութեան տաճարներուն:

որոնք շատ դիւրութեամբ, յաջողութեամբ ծառայած են ժողովուրդին իբրեւ ժամատուն, իբրեւ եկեղեցի Ս. Խորհուրդները կատարելու: Բախտաւորութիւն մ'է որ Հ. Յ. Պ. Լինչ իր ի Հայաստան ուղեւո-



Կապաղովկիոյ Պիմ-պիր-քիլիսէի տաճարմերէմ մէկը

րութեան և ուսումնասիրութեան ընթացքին, Վանի Այգեհատաններու մէջ հանդիպել է Հայկավանք եկեղեցւոյն և լուսանկարել է, առանց կարենալու ստուգել անոր հնութիւնը, որմէ մենք կ'օգտուինք արտատպելով զայն: Կա այսպէս կը գրէ.

« Այն պահուն որ կը քալեմ Այգեհատաններու մէջէն և կ'այցելեմ զանազան վարժարանները, յաճախ ուշադրութիւնս կը գրաւեն այն շատ շահեկան եկեղեցիները՝ որոնց ձեւով չեմ տեսած ուրիշ ո՛ր և է հայկական քաղաքի մէջ: Սխալ պիտի չըլլար զանոնք կոչել փայտաշէն եկեղեցիներ, թէեւ արտաքին պատերը քարաշէն են. ասոնց մէջէն ամենէն հինը անկասկած Հայկավանքի եկեղեցին է, որ հաստատուած է նոյնանուն թաղին մէջ, չկրցայ անոր ո՛րքան հին ըլլալը ճշդել. բայց անիկա կը ներկայանայ ՓՈԽՆՑՄԱՆ ՁԵՒ ՄԸ՝ զէպ ի սովորական քարէ շէնքին, Այգեհատանի միւս չորս եկեղեցիներուն ոճը, որոնց մէջ ատենանի տանիքի սիւները և ներքին կազմածը բացարձակապէս փայտեայ են... Հայկավանքի եկեղեցւոյն մէջ ատենանը պահարաններէ կը բաժնուի քարէ

չորս և փայտէ տանակէց սիւներով, իւրաքանչիւր կողմը ութթական հատ. խորանին վրայի ամպիոնին ճակատն ալ քարէ է. լոյսը ներս կը մտնէ տանիքին վրայի երեք լուսամուտներէն... Հինգ եկեղեցիներուն մէջ ամենէն հրապուրիչը Նորաշէնն է որ աչքի կը զարնէ իր երկու փայտաշէն և ութանկիւնի գմբէթներովը...»²:

Ասիկա կ'ապացուցանէ մեր վարկածը, թէ Հայերն ի սկզբանէ բնածին զգացումով կերտեցին իրենց հողածածուկ գմբէթադ տունները, Յոյներն՝ իրենց Մեկարոնը: Հայերը մշակեցին այդ արուեստը, ժամանակին հետ ազնուացուցին և որոշ կանոններու ենթարկեցին, որով մեծամեծներու տունները գմբէթաւոր ըրին, իբր հասարակաց ժողովատեղիներ: Արշակունի թագաւորներ կատարեալ մեկենասներ եղան և քաջաւերցին հետզհետէ աւելի կատարելագործելու քնաշխարհիկ արուեստը, զոր տաղանդաւոր շինողներ ենթարկեցին որոշ կանոններու, երբ փայտի ատաղձէն անցան քարի աշխատութեան: Նոյնիսկ տուններու ճարտարապետութիւնն ի սկզբան տարրական լինելով, սակայն կը պարուհակէր գիտական գաղտնիքներ, զորս անդրադարձան վարպետները, և հետամուտ եղան գմբէթի գաղտնիքը լուծելու. և միմիայն հայ քարագործին վերապահուած էր անոր լուծումը. որովհետեւ ուրիշ տեղ ըսած ենք որ Հայ քարագործը իր փորձառութեամբ տեսական գիտութիւնը գերազանցեց. վասն զի ենթարկուած չէր դպրոցի կանոններուն՝ յոյն և լատին ճարտարապետներու պէս, որոնք այդ կանոններէն դուրս միտք չէին բանեցնել. իսկ հայ արուեստաւորը յանդգնօրէն փորձէ փորձ անցնելով, լաւն ու վատը շինելով, առանց շինուածապետներու քննադատութեան ենթարկուելու՝ գտաւ կերպը գմբէթը չորս անջատ սիւներու վրայ դնելու՝ կը-

1. Ընդգծումը մերն է:
2. Հ. Յ. Պ. Լինչ. Հայաստան ուղեւորութիւններ և ուսումնասիրութիւններ. Հատոր Բ. Տաճկահայաստան. 1914, Կ. Պոլիս: Թրգ. Լ. Լարենց:

շռականօրէն քառակուսիէն անցնիլ կլորին և լուծել կորացցուններու (pendentifs) հանելուկը: Այսպէս Գ. դարու մէջ սկսան քարաշէն գմբէթաւոր եկեղեցիներ կառուցանել հիմերէն մինչեւ կաթողիկէի գագաթը, ո՛չ աղիւսով, այլ սրբատաշ քարերով:

Հայոց գմբէթաւոր եկեղեցիներու արուեստը, հաւատալով Ագաթանգեղոսի պատմածներուն, կը սկսի Գրիգոր Լուսաւորչով: Մեզի կը թուի թէ Գրիգոր Կեսարիա եղած ժամանակ քարագործութեամբ պարապած և եղած է ճարտարապետ: Նորադարձ ժողովրդեան եկեղեցի հարկաւոր էր. չուզելով իր գիտութիւնն ու արուեստը յայտնի ընել, և լաւագոյն տպաւորութիւն մը գործելու համար հաւատացողներու վրայ, կը պատմէ իր ունեցած երկնաւոր տեսիլը՝ Միածնին էջը, մուրճով գետին խփելը մէջ կը բերէ որպէս թէ երկնքի հրեշտակը ցոյց տուեր է շինուելիք եկեղեցւոյ ձեւը: Առաւօտուն երբ կ'արթննայ, հրաշալի տեսիլքի տպաւորութեան տակ, պատկերը աչքի առջեւն չի հեռանար, կը հրաւիրէ գործաւորները սկսիլ եկեղեցւոյ շինութեան գործը: Բայց իր զաղափարը բոլորովին նոր ըլլալով, անհասկնալի կը մնայ գործաւորներուն, ուստի ինքը ձեռք կ'առնէ ճարտարի լարը (maître-maçon) և կը սկսի գծել եկեղեցւոյ ձեւը: Շատ այլաբանական մեկնութիւններէ վերջ կ'աւելցնէ. « Եւ ասէցիս այրն, պինդ կաց, քաջ լիբ, զգոյշ լիբ. զի գործ ի ձեռն եկեալ հասեալ է քեզ (ոչ միայն հովուական, այլ և ճարտարապետական)... Արդ զգոյշ լիբ աւանդիդ՝ որ քեզ հաւատացաւ (իմա՛ այս շինութեան գործը) ի տեսնէ Յիսուսէ Քրիստոսէ. շինեալիդ զտաճար անուանն Աստուծոյ՝ որ ցուցաւ ի տեղւոջն... Եւ ինքն Գրիգորիոս զլար ճարտարապետութեան շինողացն ի ձեռն առեալ, զերանելացն վկայարանն հանգստարանացն հիմունս յօրինէր»²:

Մէկ դար յետոյ Ս. Մեսրոբ ալ վառուած զրերու զիտի տենչով, « բազում

անգամ ճգնեալ (դորա) յԱսորոց աշխարհին»³ և ահա կը ննջէ և կը տեսնէ « ոչ ի քուն երազ և ոչ յարթութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց » են: Սակայն Հայոց



Հայկավանք եկեղեցին Վանի Այգեհատաններու մէջ

զորոց զիտի պատմութիւնը հասած էր Կ. Պոլիս, բայց ոչ տեսիլքինը, զոր գուցէ Մեսրոբ թաքուն պահեր էր, նախանձ չգրգռելու կամ խոնարհութեան համար: Բայց երբ Թէոդոս առ երեսս Մեսրոբի կ'ըսէ. « Եւ առաւել յայսմ մեղադիր եմք, զի արհամարհեալ զճարտարօքս, որ ի մերում քաղաքիս, Ասորեաց ոմանց խընդրէիր զիմաստից զիւտս... Բայց զի յետոյ պատմեաց մեզ Մեսրոբ, թէ կատարումն արուեստիդ ի շնորհաց վերնոյն եղեւ, զրեցաք »: Թէ՛ Գրիգոր, թէ՛ Մեսրոբ այս-

1. Մինչեւ այսօր կեսորացի հայ ճարտարապետներ անուանի եղած են:

1. Ագ. 563-565. տպ. 1835. Ս. Ղազար:

3. Խոր. Գ. զԼ. ԾԷ. էջ 531. տպ. 1881. Վ. Կենտիկ:

պէս թէ այնպէս հասած են իրենց նպատակին մեր երջանկութեան համար:¹

ԽԳ. Մեր հետագայ պատմիչներէն ոչ ոք ըրած է Վաղարշապատու Գրիգորաշէն կաթողիկէի նկարագրութիւնը. բայց Ագաթանգեղոսի համառօտ նկարագրածը բաւական չէ ճիշտ գաղափար մը կազմելու թէ ինչ ձեւի էր: Եկեղեցին խաչաձեւ եղած կը թուի. որով չորս թեւերու վրայի կամարները, շնորհիւ կորնթարդ ցցուններուն «իրարու կապուեցան կամարապսակով, և անոր վրայ կու գար զմբէթաձեւ, խորանարդ (իմա՛ խորան), ամպեղէն, շինուած աստուածակերպ զարմանալի»²:

Գր. Լուսաւորչի հիմնարկութեան ձեւը, տարազը, երեւակայելու և կերպարանելու համար, բաւական չէ այն գաղափարը զոր կը կազմենք Ագաթանգեղի պատմութենէն. ուստի կը հրապուրուիմ համեմատութեան դնել ժամանակակից և պատմական եկեղեցիներու հետ, փոքր ի շատէ պատկերելու Վաղարշապատի կաթողիկէն. և տեսնել որքան յաջողութիւն պիտի ունենանք մեր ըրած բաղդատութենէն. ասոր համար հարկաւոր է պատմութեան թելը ձեռքէ չձգել:

Խոսքով Բ յաջորդելով հօր աթոռը, չի կրնար բնակիլ Արտաշատու մէջ, վասն զի Երասխ իր անկողինը փոխած էր, որուն պատճառաւ քաղաքին չորս բոլորը ճահիճներ ձեւացեր էին. ամառ ատեն՝ քամին փչած ժամանակ ապականած օդը կը բերէր քաղաքին վրայ և պատճառ կ'ըլլար հիւանդութեանց: Խոսքով տկարակազմ ըլլալով՝ ենթակայ էր տարափոխիկ հիւանդութեանց, ուստի կ'որոշէ և կը փոխէ արքունիքը Արտաշատէն ի Դուին, ուր այլեւայլ շինութեանց հետ «նաեւ զարքունիսն փոխէ ի վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ»³: Նմանապէս քաղաքացիները չկարենալով տանիլ օդին ժանտահոտութիւնը, «որք յԱրտաշատ բնակեալ էին, կամաւ յանձն առին զփոփոխումն»⁴:

Արդ, թագաւորն և ժողովուրդը չէին կրնար առանց եկեղեցւոյ մնալ: Խոսքով անպատճառ շինած է իրեն համար ար-


քունական եկեղեցի Դուինի մէջ. ինչպէս Տիրանի համար կը զրէ Խորենացին թէ՛ Յուլիանոս ուրացողի պատկերը «յիւրում արքունական եկեղեցւոյն կամեցաւ կանգնել»⁵: Սակայն խոսքով՝ որուն հետ էր նաեւ ձերունին Վրթանէս, ինչ ձեւով ընտրած են շինել Դուինի եկեղեցին: Անտարակոյս կաթողիկոսը ցանկացած է ըստ օրինակի Վաղարշապատու եկեղեցւոյն շինել. եթէ հին ճարտարապետները մեռած էին, անոնց որդիքը արդէն վարժ արուեստաւորներ եղած են և զորքը անոնց յանձնուած կ'ըլլայ: Արդ, Խոսքովի ժամանակէն մինչեւ Վահան Մամիկոնեանի մարզպանութիւնը, գրեթէ 150 տարւոյ չափ, չի յիշուիր ոչ մէկ ուրիշ իշխան կամ Հայրապետ որ Դուինի մէջ շինած ըլլայ մեծ և պատկառելի եկեղեցի մը: Եղածն այն հոյակապ եկեղեցին է, ուր Յովհան Մանգակունին կը հովուէր, և Մեծն Վահան Մարզպանութեան պատիւն ստանալով Պարսից Վաղարշ արքայից արքայէն, փառահեղ արքայօրէն մուտք կը գործէ Դուին, և Հայոց Հայրապետը զինքը կ'ընդունէր Մայր եկեղեցւոյ մէջ՝ գոհացողական մաղթանքներ կատարելու Աստուծոյ ըրած մեծ շնորհքներուն համար: Լսենք ականատես պատմագրին խօսքերը. «Իսկ տէրն Մամիկոնենից Վահան զօրավարն Հայոց եւ Մարզպան . . . առեալ զհրովարտակն՝ խնդրէր վաղվաղակի անդրովարտակն՝ երթալ ի տունն Աստուծոյ: Եւ լուեալ զայս մարդկանն՝ որ ի քաղաքին, գրոհ տուեալ առհասարակ ամենայն մարդոյ՝ նախարարաց և ազատաց, ոստանկաց և ուսմկաց, արանց և կանանց, ձերոց և տղայոց այլ և հարսունք անգամ յառագաստից մոռացեալ առ վայր մի առ ինդին զամօթ հարսնութեան զիմեալ ընթանային յեկեղեցին: Եւ ոչ բաւեալ ընդունել զա-

1. Խոր. Գ. ԳԼ. ԾԷ. էջ 534.
2. Ագ. 552.
3. Խոր. Գ. ԳԼ. Ը. 412.
4. Խոր. Անդ.
5. Խոր. Գ. ԳԼ. ԾԳ.

մենեսեան տանն Աստուծոյ, ԼՆՈՒԻՆ ԱՐՏԱՔՈՑ ՍՐԱՀՔ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ և փողոցը և ամենայն տեղիք հրապարակացն շուրջանակի»¹:

Այս նկարագրութենէն հասկնալի է որ Դուինի եկեղեցին եղած է փոքր ի շատէ ըստ յատակագծի այժմեան Ուզունլարու (Օձուն) եկեղեցւոյն, որ ունի իր բարձր կաթողիկէն և երեք կողմանէ արտաքոյ կամարակապ ՍՐԱՀՔԻ, ուր բազմութիւնը կը հաւաքուէր երբ ծխակատարութիւնը կը պահանջէր որ ժողովուրդը դուրս գար եկեղեցիէն: Օձուն գիւղի եկեղեցին է դարու մէջ շինուած ըլլալով, ճարտարապետը կրնար իր օրինակն առնել Դուինի արքունի եկեղեցիէն: Ուրեմն հետեւանք այն պիտի ըլլայ ըսելու ա) թէ Վաղարշապատու լուսաւորչաշէն կաթողիկէն փոքր ի շատէ այս մակարդակաչափով շինուած է. բ) Լուսաւորչի շինած կաթողիկէն, ըստ իր տեսիլքին գմբէթաւոր էր. կեդրոնական շէնքը չորս անջատ սիւներու վրայ շինուած և քառակուսիէն անցած կլոր պսակին, կամարներու բաց եռանկիւնները ցցուններով հիւսուած. գ) Ան եղաւ քրիստոնէական արուեստի նախօրինակը բոլոր աշխարհի գմբէթաւոր եկեղեցիներուն: Մեծն Յուստինիանոս կայսրութեան արեւելեան գաւառներն և Հայաստան մինչեւ ի Դուին ճանապարհորդելով, տեսեր էր Անտոկիոյ բարձրաւանդակէ՞ եկեղեցիները, ցանկացեր էր նոյն ոճով տաճար մը կանգնել Մայրաքաղաքին մէջ, որուն նմանը չգտնուի երկրիս երեսը²: Իր զօրավարը Պրոկոպիոս՝ շատ տարիներ ապրած ըլլալով Հայաստանի մէջ, ի կարողութեան էր մեր երկրին գլխաւոր եկեղեցիներու մակարդակներն առնել և ճամբել Բիւզանդիոն իր տիրոջ, և նա իր Տրալլացի և Միլետացի ճարտարապետներուն ներկայացնէր ուսումնասիրութեան համար:


Եթէ հաւատանք Անաստաս Վարդապետին որ հնարաւորութիւն ունեցած էր այցելելու Ս. Տեղերը, կը զրէր է դարուն թէ Հայոց մեծամեծ նախարարութիւններ, Գլարէն սկսած Երուսաղէմի մէջ և շրջա-



Օձուն (Ուզունլար) գիւղի կաթողիկէի յատակագիծը


կայքը շինած են վանքեր և եկեղեցիներ, տարակոյս չկայ հայ ոճի վրայ, զոր տեսած են Վաղարշապատի, Տեկորի մէջ շինուած և այլ տեղեր: Անկից օգտուեցան արեւմտեան այն արուեստաւորները՝ որոնք նոյն շաւղով ճամբորդեցին դէպ ի Երուսաղէմ, որով Գլարու երկրորդ կէսին Ակուիտանացի Տիկին Սիլուիա՝ կարապետ և ճամբայ բացող եղաւ իր հայրենակիցներուն. մանաւանդ Միջին դարու Բենեդիկտեան Աբբաները, որոնք ի սկզբան Բարսեղեան կը կոչուէին, Մեծ Հայրապետի կանոններն ընտրած էին, և Հռաւենյայի մէջ Ս. Ապոլոնիոսը Նաւակայքի եկեղեցին, իրենց վանքն էր. անոնք նոյն քաղաքին մէջ բնակող հա-

1. Ղազ. Փարպ. էջ 546. տպ. 1873. Վ. Կնիտիկ.
2. Հայաստանի!
3. Անտարակոյս, որովհետեւ մտադրած էր 365 միլիոն ծախսել անոր գեղեցկութեան համար:



Օծուծ (Ուզուծլար) գիւղի Կաթողիկէս

յերուն հետ շփման մէջ էին, և զուգէ առաջ-
նորդ եւս եղած են ուրիշներու արեւելք
և մինչեւ Հայաստան ճանապարհորդելու։
Այդ Աբբաներէն շատեր, որոնք նոր վան-
քերու հիմնադիր դարձան, ճարտարապետ-
ներ էին. անոնք մեղուններու նման դիտե-
լով և կաղապարելով արեւելքի ճարտա-
րապետական ծաղիկներէն, փոխադրեցին
արեւմուտք։ Սկանտինաւեան երկիրները



Հայկական գմբէթաբդ գիւղական տուն

վաղուց օգտուեցան մեր հեղեղեցական ու-
ճէն, բայց առաւելագոյն կերպով օգտուե-
ցան Ֆրանսայի հարաւային գաւառները,
հին կեղտական սերունդներէն, և բուն իսկ
Սիլուիա Տիկնոջ հայրենիքի՝ Ակուիտանիոյ
մէջ՝ կանգնեցին հարիւրաւոր գմբէթաւոր
եկեղեցիներ. և նոյնիսկ Ֆրանսացի ճար-
տարապետներ կը խոստովանին զայն, թէ-
պէտ կան և նորեր որոնք հայրենասիրու-
թեամբ կ'ուզեն անոնց ծնունդը պաշտպա-
նել՝ իբր բնաշխարհիկ (autochtone)
ստեղծագործութիւն¹։

Ի շարս Անտիոքի, Եփեսոսի և Պերգա-
մոնի՝ քրիստոնէական արուեստի ամենա-
կարեւոր կեդրոն մը պէտք է ընդունիլ
Փոփոքիայէն դէպ ի արեւելք տարածուած
երկիրները, Կապադովկիա, Հայաստանի
բարձրաւանդակը՝ մինչեւ Պոնտոսի սահ-
մանները, հիւսիսային Ասորիք և Միջա-
գետք Հայաստանի։ Այս երկիրներն ուղ-
ղակի հելլենական ազդեցութեան տակ
ինկած չեն, այլ նախապատմական ժամա-
նակներէն արիական քաղաքակրթութեան
շունչն անցիր է Հայաստանի վրայէն և
վազեց մինչեւ արեւմուտք, և խառնուելով
բիւզանդական ալ կոչուած արուեստին հետ
կապադովկիոյ մայրաքաղաքը, Կեսարիա,
Հռոմի կայսրներու շնորհքը վայելած, մեր
հին Մաթաբը՝ թէեւ աչքը դէպ ի արեւ-
մուտք պահեց, բայց չմոռցաւ հին հին
աւանդութիւններ և սերտ յարաբերութիւն
պահեց Մեծ Հայքի հետ։ Պարզ Գ դարու
Հայոց քաղաքական արիւնտ արկածնե-
րու մէջ, Խոսրով Մեծի և Անակի մահէն
յետոյ, միմեանց թշնամի կողմերը, կու-
տորածէն ապրած երեխաներ փախցնող-
ները, շունչերնին կ'առնեն Կեսարիա.
ասիկա կը նշանակէ թէ ազգայնական և
կրօնական կապ մը կը մշակուէր Հայոց և
Կեսարացոյ միջեւ՝ Արտաշէսներու և Տի-
գրաններու ժամանակէն մինչեւ Տրդատ և
Գրիգոր։ Կրօնական կապը ոչ միայն Կե-

1. Raymond Rey. La Cathédrale de Cahors - Paris.

սարիոյ աթոռին հետ էր, այլ աւելի հե-
ռուն, Աղեքսանդրիոյ Աթոռին՝ որ իր
իրաւունքները կը տարածէր մինչեւ Հա-
յաստան, ինչպէս կ'իմանանք Եւսեբիոսի
եկեղեցական պատմութենէն։ Ս. Գիորնի-
սիոս Հայրապետը Կեսարիոյ եպիսկոպոսին
վարդապետական նամակներ կը գրէ, բայց
միեւնոյն ժամանակ ուրիշ մ'ալ կ'ուղղէ
առ Մեհրուժան Հայոց Եպս.։ Ըսի, յիշելով
մեր նիւթին վերաբերեալ, այսինքն եկե-
ղեցական ճարտարապետութեան, նկատու-
թիւն մ'ունինք ընելու. դիտելով որ
Գ-Գ դարու Ափրիկէի, Ասիոյ և Հայաս-
տանի մէջ շինուած եկեղեցիներու մա-
կարդակները զգալի նմանութիւններ ունին
իրարու հետ, բնականաբար մարդ կը
խորհի թէ՝ զուգէ Աղեքսանդրիոյ գիտական
դպրոցն ընդհանուր ծրագրի մը ենթա-
կած է ի սփիւռս շինութիւն եկեղեցիները
յարմարաւորը ծիսական արարողութեանց։
Նոյն Ս. Հայրապետը քրիստոնէից համար
կը սահմանէր Ս. Զատիկը տօնել Մարտի
22ին. և ութ տարուան համար պատրաս-
տած տօնացոյցներ կը դրկէր բոլոր գա-
ւառական եկեղեցիներուն։

Այս յիշատակութիւնները ցոյց կու-
տան որ Հայաստան ի սպառ կղզիացած
չէր լուսաւորեալ աշխարհէն և իր մէջ
կը հասունցնէր քրիստոնէական արուեստի
էական տարերը։

ԽԳ. Եթէ Հայերը մինչեւ Ե դար չեն ու-
նեցած Սիւրիոյ նման հոյակապ եկեղեցի-
ներ, ոչ թէ հանճար կը պակսէր, այլ
խաղաղութիւն քաղաքական և կրօնքի
յառ հասկացողութիւն։ Վասն զի Լուսա-
ւորչի ժամանակէն մինչեւ Ս. Մեսրոբ,
Յոյն և Ասորի լեզուներով կը կատար-
ուէին եկեղեցական պաշտամունք, զոր
չէր հասկնար ժողովուրդը։ Պաշտօնական
Թարգմանիչներու խօսքը ցուրտ էր, չէր
վառեր սրաներին Աստուծոյ սիրով, հա-
ւատացեալները անբաւական կը մեկնէին
եկեղեցիէն։ Այս մասին Փաւստոս Բիւ-
զանդացոյն գրածը կը խորէ հայ սիրտը.
«Չի ի վաղնջուց յորմէհետէ առին նոքա
զանուն քրիստոնէութեանն, լոկ միայն

իրեւ զկրօնս իմն մարդկութեան յանձինս
իւրեանց՝ և ոչ ջերմեռանդն ինչ հաւա-
տովք ընկալան, այլ իբրեւ զմոլորութիւն
իմն մարդկութեան ի հարկէ»²։

Ասոր ակնարկութիւնը կը գտնենք Կո-
րնի հետեւեալ խօսքերուն մէջ. «Բայց
զի ոչ էր գիր հայերէն լեզուիս, բազում
պակասութիւն լինէր ճշմարտութեան ա-
ւանդիցն՝ առ աշակերտեալսն»³։ Միակ
դեղ և դարման այս սգիտութիւնն հաւա-
ծելու՝ սեփական գիր ունենալն էր և հա-
յերէն լեզուով ուսուցանելն էր քրիստո-
նէական կրօնքը։ Եւ շնորհիւ մեր երանելի
Թարգմանչաց՝ հայկական գիրն ստեղծուե-
ցաւ, հաստատուն հիմքու վրայ դրուած,
դպրոցներ բացուեցան, ուսումը կայծակի
երագութեամբ ծաւալեցաւ Հայաստանի և
հարեւան ազգերու մէջ։ Ուրախութեամբ
յափշտակուած հայ ժողովուրդը երջանիկ
կը զգար ինքզինքը որ սեփական ական-
ջով ուղղակի կը լսէր և կը հասկնար Ս.
Գիրքը, Աւետարանը, Ս. Պատարագի ա-
ղօթքները և կը մասնակցէր դպիրներու
երգերուն։ Այդ վայրկենի տպաւորութիւնը
նկարագրած է նոյնինքն Կորնի. «Յայնմ
ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս
Հայոց՝ անպայման սքանչելի լինէր, յու-
րում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝
մարգարէական դասուն, և յառաջողէմն
Պողոս բովանդակ առաքելական գնդովն
հանդերձ, աշխարհակեցոյց աւետարանան
Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ
ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբար-
բառք հայերէնախօսք գտան»⁴։

Գրոց գիւտի առաջին պտուղն եղաւ
գումարել, կազմել և ի մի ձուլել 60,000
քաջեր և զանոնք կանգնել Տղմուտի եզերքը
որպէսզի Հայաստան չողողուի պիղծ մոգե-
րու վարդապետութեամբ։ Հոն ինկան մեր

1. Une (lettre) aux Arméniens dont Meruzane
était Evêque. Եւս. Պատ. Եկեղ. Գիրք 2. զւ. 46.
Գիրք Լ. զւ. Ի. տպ. Պարիս. 1686.
2. Բիւզ. Գ. զւ. ԺԳ. 1914. Վենետիկ.
3. Կոր. էջ 16. տպ. 1894. Վենետիկ.
4. Կոր. էջ 22. տպ. 1894.

դիւցազուն նահատակները՝ Մեծն Վարդան և ընկերքը. Նիւշապուր քաղաքի մօտ նա հատակուեցան Ղեւոնդեան Ս. քահանայը, բայց Գիրը շարունակեց պատերազմիլ՝ մինչև Մեծին Վահանայ շնորհալիր յաղթանակը. երբ Վաղարշ և Պարսից արքունիքը նստեցուցին զնա յաթոռն Մամիկոնեան տանուտէրութեան, Հայաստանի զօրավարութիւնը տուին և Հայոց Մարգարան կարգեցին: Գիրն էր որ Յովհան կաթողիկոսի բերնով հռչակեց և բարձրացուց Վարդանանք և Վահանեանք և անոնց յաղթանակը որ ընդմիջտ փրկեց Հայաստանը, Կրօնք և Ազգութիւն:

Երկրորդ պտուղն եղաւ հայկական ճարտարապետութեան հսկայաքայլ յառաջադիմութիւնը. երիտասարդ արուեստաւորներու հանճարն արթնցաւ՝ Սողոմոնեան տաճարէն աւելի գեղեցիկն ու վսեմը կառուցանելու իրենց սիրած Աստուծոյն, որ ցոյց տուած էր Լուսաւորչի՝ իրեն հաճոյ ճարտարապետական ձեւը, տաճար երկնախորան, բարձրաբերձ ամենապայծառ վայելչութեամբ: Հայ ճարտարապետը Եզարուն իր քաջութիւնն և արուեստը ցոյց տուած պիտի ըլլար նախ և առաջ Ս. Մեսրոբի գերեզմանին վրայ կառուցանելով գմբէթաւոր քարաշէն եկեղեցի մը: Վահան Ամատունի շքեղ յուղարկաւորութեամբ տարաւ Օշական, և սրբասուն մարմնոյն վրայ համեստ կամարայարկ մը շինեց, որ կայ մինչև ցայսօր, և սրբոյն տապանաքարը համբուրելու բախտն ունեցած է տողերս զրոգը: Եւ ցաւալի է որ 440-443 ի Վահան Ամատունւոյ շինած քարաշէն եկեղեցւոյ մանրամասն տեղեկութիւն մը տուած չէ Կորիւն, և այսօր հիմերն անգամ կորսուած են: Երեք տարիէն յետոյ միայն, կ'ըսէ յաջողեցաւ Վահան «Խորան սքանչելի կանգնել տաշածոյ վիմօք քանդակելով»: Այսչափէն կարելի է հասկնալ որ ունեցած ըլլայ կեդրոնական գմբէթը. ապա թէ ոչ «Խորան սքանչելի» անբացատրելի կը մնայ:

Ասոր կը յաջորդեն անմիջապէս Մեծն Վահանի շինած և նորոգած եկեղեցիները,

որոնցմէ Ղազար կը յիշէ Վաղարշապատինը. «Եւ եկեալ հասանէր այնուհետեւ ի Վաղարշապատ քաղաք... ի սուրբ եկեղեցւոյն կաթողիկէի, զոր հիմնարկեալ՝ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ՝ զհնացեալ գործ նախնեացն իւրոց»: Այսինքն ի հիմանց նորոգեաց՝ զհնացեալ գործ նախնեացն, և ոչ թէ «հիմնարկեալ շինեաց». որով կաթողիկէն կը մնայ իր նախնեաց ձեռքով շինածը, վասն զի քարաշէն եղած է:

Ապա՝ Տեկորի տաճարին վերածումը գմբէթաւոր եկեղեցւոյ, ամենէն ուշագրաւն է, որովհետեւ առաջին փորձերէն մէկն է որ Հայկավանքի փայտաշէն գմբէթաւոր եկեղեցիէն՝ քարագործը քարաշէն գմբէթաւորին կ'անցնի¹:

Վահան իր մեծ փառքերուն մէջ չմոռցաւ իր զինակից անձնուէր և քաջարի ընկերը, Ներսէս կամսարականը, և համարձակեցաւ խնդրել Վաղարշէն, անոր ալ շնորհել կամսարական տոհմի տանուտէրական պատիւը, և խնդիրը կատարուեցաւ, որով Վահան և Ներսէս լի ուրախութեամբ դարձան Հայաստան:

Ներսէսի և Հրահատայ կրտսեր եղբայրը Սահակ, բարի նախանձով լցուած ուզեր է իրենց եկեղեցւոյն փայտաշէն գմբէթը վերցնել և անոր տեղ կանգնել քարաշէն կաթողիկէն. և բարաւորի վրայ քանդակուած է մեծ գրերով. «Սահակ կամսարական շինեաց զայս վկայարան»: Հ. Ալիշան տարակուսանքով կը համարի զսաերեց եղբայր երկու կամսարականներու, Ներսէսի և Հրատայ: Թուի թէ աւելի կրտսեր եղբայրն եղած ըլլայ, զոր Վահան պատանդ կը թողու Նիսորայ մօտ.

1. Կը յօժարիմ կարդալ «ձեռնարկեալ»:

2. Մեր յարգելի և տաղանդաւոր բարեկամը, ճարտարապետ Թ. Թորամանեան, Տեկորի եկեղեցւոյ վրայ զրոյս ուսումնասիրութեամբ, որ իր տեսակին մէջ հայ յերուս համար առաջինն է, շատ յաջող կերպով բացատրած և մեկնած է այլեւայլ ժամանակներու ընթացքին եղած փոփոխութիւնները. «Պատմական հայ ճարտարապետութիւն». Թիֆլիս, 1911:

երկրորդ Տանուտէրական պատիւը կը տրուէր տոհմի մէջ՝ երիցագունին. արդ, Փարպեցին էջ 382 կը գրէ. «Եւ երկու քեան արք անուանիք Տէրն Շիրակայ Ներսէս՝ սիրելի եղբարքն իւրով հանդերձ Հրահատաւ»: Ուշադիր դիտողի աչքէն չի վրիպիր որ ամբողջ շինութիւնը միակտուր մի արուեստաւորի գործ չէ: Աչքի կը զարնէ մինչև պատուհաններու շքեղակամարի շինուածի թխութիւնն և անկից վեր դեղնորակ քարերով է շինուած և շարուածքն անկատար: Բայց աւելի՝ զգմբէթի կառուցուածքը տարօրինակ երեւցաւ, որ իբր կարկտան կեցած էր, այնպէս որ բովանդակ եկեղեցւոյ հետ միապաղաղ շինութիւն մը չէր կազմեր: Յետոյ պատերու մէջ հիւսուած գերանները՝ տարբեր ժամանակի գործ մը թուեցաւ Եզարէն առաջ իսկ շինուած: Տեկորի մասին այն կրնամ ըսել, ինչ որ 1910-12 թ. Հոռմ եղած ժամանակս բացատրած եմ Յ. Ռիւդյիոս իտալացի ճարտարապետին: Այնչայտնի է որ հիմնարկութիւնն եղած է նախ քան քրիստոնէութիւնը. Շիրակ և Արշարունիք Արշակունի թագաւորներու սեփականութիւն ըլլալով, առաջին հիմնարկութիւնն եղած է Տիգրանի ժամանակէն, երբ Փոքր Ասիայէն բերած կոոց արձաններով ճոխացուց Հայաստանի մեհեանները: Թերեւս հազարաչէն՝ ծածր մ'ունեցած ըլլայ:

Չարմանալի զուգադիպութեամբ Հռաւենյայի Կալլա Փլաշիտիայի շիրմի զգմբէթին արտաքինը կը նմանի Տեկորինին. ատոնք նոյն ժամանակները շինուած են: Այս նմանութիւնը կը ծանուցանէ թէ իտալական դասական երկրին մէջ հայ արուեստը մուտք կը գտնէր այն ժամանակ՝ երբ Հռաւենյա կը նստէին Հայ փոխարքաներ՝ Ներսէս և Իսահակ պատրիկներ և իտալիան կը կառավարէին: Այնքան անուանի էր հայ գաղութը որ մինչև իսկ կարծուեցաւ թէ հայերը հիմնած ըլլան զանի ջրհեղեղէն 234 տարի յետոյ², և այնքան պայծառացուցին՝ որ մայրաքաղաքի շուրջ և փայլ ստացաւ իր պալատներով, և

տակաւին կանգուն մնացած ճոխապաճոյճ խճանկարած եկեղեցիներով, այս պատիւ է հայ ազգին: Եւ կը կարծուի որ Ներսէս պատրիկ ուղարկած ըլլայ իր հայ արուեստաւորներէն, ճոխացնելու Ս. Սոփիայի երկնասլացիկ կամարներն ու որմերը նախ շուն քարերով³:

Բազիլիկայ եկեղեցիներու շրջանը Գդարուն կ'աւարտի և կը սկսին ծայր տալ քարակերտ գմբէթաւորեալ եկեղեցիներու երկչոտ փորձերը. ուստի իբրեւ համեմատութեան կէտ առնելով Տեկորի եկեղեցւոյ գմբէթի վերածումը, ուր վարպետի երկչոտ ձեռքը կը նշմարուի շուրջ 490 թ. մինչև Ս. Հովսիսի մէջ փայտաշէն գմբէթի քարով վերաշինումը. Եզարու առաջին քառորդին (617-625) Կոմիտաս կաթողիկոսի ձեռքով, ինչ հսկայական քայլ առած է դէպ ի կատարելագործութիւն Հայաստանի քրիստոնէական ճարտարապետութիւնը՝ յատկապէս և կառուցուածքի. Հովսիսի մէջ յանդուգն թեւատարած գմբէթի ճապաղուածքը, օգտապարիկի նման կը թուի ճախրել բարձրէն գլխուղ վերեւ:

Կեդրոնական շինութեան գմբէթաւորումն արդէն պատրաստ է Բիւզանդիոնի արուեստաւորներուն համար, որոնք պիտի փորձեն գմբէթաւորել Ս. Սոփիայի լայն կամարները, որոնք աւաղ, կարճակեաց պիտի ըլլան և մեր կարծեօք երկրորդ ան-

1. Հիւսնութեան ճարտար գործ մ'է, փոխանակ Հայկավանքի կոպիտ գերաններուն, կարճլիկ տաշած քաւակուսի կոնտեր իրարու ազուցանելով և հետզհետէ քաղելով բոլորամասնի կ'եւլեն մինչև երդիքն և քառակուսի կամ բոլոր շրջանակով կը կնքեն:

2. Գիտնիսիոս Աղիկաւանցի Գիրք Ա, էջ 14. - Ստրաբոն, Գիրք Ե, էջ 148:

3. Անցած դարու մէջ Մայ ծիրանաւորը գտաւ Վատիկանու գրատան ասորի ձեռագրի մը մէջ՝ զրուած 540 թ. Չաքարիա հայ եպիսկոպոսի ուղեւորութիւն մը ի Հոռմ, անոր գրած՝ ուղեցոյց Հոռմ քաղաքի, կամ ըսինք՝ փողոցներու և շէնքերու վրայ տուած տեղեկութիւնները շատ զնահատուած են հնագիտութեամբ պարագիծներու կողմանէ, որոնք աշխատեցան Հին Հոռմի տեղագրութիւնը կազմել և ստուգել հին յիշատակարաններու տեղերը: Տես Արմենիի. «Հոռմի եկեղեցիներ», էջ 8. տպ. 1891. Հոռմ:

գամ հայ ձեռքեր աշխատած պիտի ըլլան վրան, զոր թ դարուն երկրաշարժը միայն պիտի կարենար խախտել — իբր աստուածային տեսչութեամբ — որպէս զի անիկա որ գմբէթ կառուցանելու արուեստն հասուցած էր իր կատարելութեան, Տրդատ ճարտարապետը՝ մեծապայծառ շինէ հայ արուեստով պատրաստուած հիման վրայ, ինչպէս որ Անույ Մարեմայ մայր-եկե-

ղեցին «կառոյց ամենապայծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամարօք գմբէթաւորեալ, խորան երկնաման»¹։

Թ դարուն Հայկական քրիստոնէական արուեստի ճարտարապետութիւնն իր վերջին խօսքն ըսած էր։

(Շարունակելի)

Հ. Գ. ՆԱԶԱԳԵՏԵԱՆ

Յ. Ասողկ. Գ. ԺԱ.

Un très ancien commentaire grec sur le Lévitique, conservé en arménien

(Suite, voir «Pazmaveb» 1932, p. 436)

Il faudra que nous parlions une autre fois des passages de St. Cyrille, des autres auteurs et aussi de la disposition des matériaux de la chaîne arménienne dans notre petite étude sur le commentaire de Procope; en attendant, nous ne pouvons nous passer d'alléguer ici quelques morceaux inédits de St. Cyrille sur l'Evangile de St. Matthieu, qui, si nous ne nous trompons, devront être de quelque intérêt.

Leur accord avec quelques fragments de ce commentaire, conservés en grec, ou avec d'autres passages de différentes œuvres, ou bien encore avec des fragments que l'on trouve dans la C. L. sous le nom de Cyrille, n'est pas une raison méprisable en faveur de leur authenticité. Comme commentaire des deux premiers versets du I chap. du Lévit. nous lisons :

ՆՈՐԻՆ, ՅՈՐՄԵ Ի ՄԱԹԷՈՍԻ ԳԼԽՈՅԵ՝ ՄԵԿ.

(Code A 437-8 — Code B 371)

Խաւեցաւ ի ձեռն հրեշտակաց զաւրէնս նախնեաց². յայտ է զի միջնորդութեամբ ամենիմաստին մովսիսի և զոր ի ձեռն արեան կենդանեացն³ զնուռն⁴ եմոյժ պաշտաւն ոչ ամենայն իրաւք զայս խնդրեալ ի մէջ աստուծոյ, և կամ այսորիւք որոշեալ մեզ ի նա զբարեպաշտութեանն պարճանս, քանզի որոյ արդարութեան իցէ յեղանակ մաքրել երբնջովքն⁵, կամ զուարակաւք երեմենիւք, կամ որոյ առաքինութեան տեսակ է ոչխարազնութիւնն և կամ⁶ խանքն լցեալք⁷ իւղալից հացիւք զանազանիւք. որոյ

1. Գլխին B, — 2. Նախնեացն, — 3. Կենդանեաց B, — 4. Զնուռն om. A, — 5. Ընչաւքն B, — 6. Ոչխարազնութիւնն կամ B, — 7. Լցեալ B.

ծուին պտուտեալ ի յաւդն լիբանանու։ որ և տէրն ամենայնի զրեթե սաստելով ի հրէիցն պաշտամունս, վասն զի այսորիւք ի յողորմութիւն անէր ի ճշմարտապէս բարին։ զոր ձայնիւ հասյայ մարգարէի ասէ՝ զողջակէզս խոյոց և զճարպ գառանց և զարինցըլուց և նոխազաց ես ոչ կամիմ. ո՞վ խնդրեաց զայդ ի ձեռաց ձերոց. քանզի ոչ արեանց մատուցման, և ոչ այսորիւք ընծայաբերութեանց կարաւտ էր աստուած, որ և լի գոլով։ քանզի նորա են գազանք վայրի, երէ՛ լերանց և ամենայն անասուն, զիտէ զամենայն թռչունս երկնից, գեղեցկութիւն վայրի ընդ նմա է ըստ գրեցելուսն։ այլ որպէս զնախակրթութիւն ինչ ճշմարտապէս և հոգւով պաշտամանն ի վերայ դնել զգիրն և նախաճառութիւն ինչ ի սիրտ առաքինութեան, որ ի պատմութենէն թանձրութիւն շնորհէր յառաջագոյն։ ապա ուրեմն ոչ վասն իւր սահմանիւր նախնեացն աւրէնքն, այլ զի եղիցին դաստիարակ մեզ առ քրիստոս, հանել առ սակաւ սակաւ առ որ ի ձեռն հաւատոցն շնորհ։

ԵՒ ՅԵՏ ՍԱԿԱՒՈՒՅ՝

Քանզի ի ներքս բերի ուն մարգարէականաւք գրովք ընդ փրկութեան ճանապարհ աստուածապաշտարար նկատել¹, զրեթէ յանձն իւր յերկուացեալ² ասելով. իւ հասից առ տէր, և ընկալայց զաստուած իմ բարձեալ։ թէ կալայց զնա ողջակիզովք³ զուարակովք⁴ տարեւորաւք։ եթէ տաց⁵ զանդրանիկս իմ վասն ամպարշտութեան զպտուղ որովայնի իմոյ՝ վասն մեղաց անձին իմոյ։ Եւ ապա առ նա որպէս ի դիմաց աստուծոյ՝ թէ պատմեցից քեզ մարդ աստուծոյ⁶. եթէ զինչ բարի և կամ զինչ խնդրէ ի քէն տէր. բայց միայն առնել իրաւունս և սիրել զողորմութիւնս, և պատրաստ լինել զնալ ընդ տեառն աստուծոյ քոյ։ արդ ի միտ առնուա թէ զիարդ ոչ յաւրինացն պաշտաւն ասաց հաճել, այլ յաւէտ ի վարսն աւետարանականս, յորում և իրաւունք և հաւատ և պատրաստ լինելն ընդ աստուծոյ զնալ։

1. Նկատեալ B, — 2. Յերկուացեալ B, — 3. Ողջակիզովք B, — 4. Զուարակաւք B, — 5. Թէ տայց B, — 6. Թէ... աստուծոյ C, om. AB.

Eiusdem ex commentario Matthæi.

«Per angelos legem maioribus praedicavit» significat: Per sapientissimum Moisen, cruentis animalium sacrificiis induxisse cultum. Minime hunc a nobis Deo requirente neque ista nobis de pietate erga se statuente: cuiusnam iustitiae forma futura fuisset iuvenorum vel vitulorum anniculorum immolatio, vel cuiusnam virtutis species oblatio ovium, vel canistra pinguibus variisque repleta panibus? cuiusnam, thuris in aërem se devolvens fumus? Universorum autem Dominus, cultum Iudaeorum quodammodo increpans, cum eos ad iustitiam et ad verum bonum dirigeret, haec, Isaiae voce, ait: *Holocausta arietum et agnorum adipem et sanguinem taurorum et hircorum nolo*. Quis hoc exquisivit ex manibus vestris? Neque enim sanguinum oblatione neque istiusmodi victimis egebat Deus quibus erat repletus; nam *Eius sunt bestiae campi, ferae montium et omnia iumenta; novit omnia volatilia caeli, pulchritudo agri secum est, secundum Scripturam*. Sed ut tanquam pristinum quemdam in veritate et spiritu proponeret librum et praefactionem quandam in corde virtutis, illi quae fuerat ab antiquitate duritiae prius indulsit. Neque tamen sibi ipsi maiorum lex finiebatur,